

Այց Արմավիրի մարզ Էջմիածնի քաղաքային գրադարան

Հոկտեմբերի 4-ին Հայաստանի ազգային գրադարանի աշխատակազմը այցելեց Արմավիրի մարզի Էջմիածնի քաղաքային գրադարան: Գրադարանը 2017թ. ստացել է հանրային գրադարանի կարգավիճակ, կահավորվել է գրադարանային գույքով, բացվել է համակարգչային տեխնիկայով հագեցած ընթերցասրահ: Գրադարանների պետական աջակցության ծրագրով Էջմիածնի քաղաքային գրադարանը համալրվել է նաև մեծաքանակ գրականությամբ:

Այցելության ընթացքում գրադարան այցելեցին նաև Էջմիածնի քաղաքապետի խորհրդական Հռիփսիմե Մանուկյանը և քաղաքապետարանի կրթության և մշակույթի բաժնի պետ Լիլիթ Հակոբյանը, ովքեր մտահոգ էին գրադարանի խնդիրներով և պատրաստակամություն հայտնեցին օգնել գրադարանին:

Հայաստանի ազգային գրադարանի գրքափոխանակության հավաքածուից Էջմիածնի քաղաքային գրադարանին նվիրաբերվեց 100 միավոր գրականություն:

